Schleswig-Holstein
Ministerium für Bildung,
Wissenschaft und Kultur

Übungsarbeit Herkunftssprachenprüfung

Mittlerer Schulabschluss

Armenisch

MSA

Name	Klasse	Datum
Erstkorrektur Unterschrift	Zweitkorrektur Unterschrift	
Note/Datum		

Liebe Schülerinnen und Schüler,

das vorliegende Übungsheft beinhaltet Beispielaufgaben zur Herkunftssprachenprüfung. Sie sind zur Unterstützung der Vorbereitung auf die zentralen Abschlussprüfungen gedacht.

Wir wünschen viel Erfolg bei der Vorbereitung und den Prüfungen!

Name: _____

Aufgabe I Leseverstehen

I. Jugendliche auf Reisen

Առաջադրանք.

- Կարդա՛ (1-8) վերնագրերը, այնուհետև տեքստի հատվածները (A-E):
- Գտի՛ր յուրաքանչյուր վերնագրի համար տեքստի համապատասխան հատվածը:
- Գրի՛ր (1-8) ճիշտ թվերը տեքստերի կողքի աջ սյունակում:
- Յուրաքանչյուր թիվ կարելի է ընտրել միայն մեկ անգամ: Երեք թիվ (վերնագիր) մնում է ավել:
- Կա մեկ օրինակ(0):

Վերնագրեր.

0	Կարևոր փորձառություն հավաքել ապագայի համար
1	Կամավոր օգնել մարդկանց մեկ ուրիշ երկրում
2	Օտար լեզուներ ավելի արագ սովորել
3	Մասնակցել միջազգային երիտասարդական հանդիպումների
4	Կազմակերպել մշակութային նախագծեր մեկ այլ երկրում
5	Մաքուր օդին զբաղվել սպորտով այլոց հետ
6	նախապատրաստել արտասահմանյան կացություն որևէ հյուրընկալող ընտանիքում
7	Մասնակցել աշակերտների փոխանակման ծրագրին
8	Գումար վաստակել ճանապարհորդությունների ժամանակ

Name: _____

Z	Երիտասարդ տարիքում կատարած ճանապարհորդությունը հնարավորություն է տալիս ձեռք բերել շատ փորձ և ընդլայնում է մտահորիզոնը: Այդ փորձառությունները քեզ ուժեղ են դարձնում որպես մարդ, բարձրացնում են ինքնավստահությունդ և դրա հետ մեկտեղ օգնում են քեզ բացահայտել քո տաղանդները: Բացի դրանից առանց մեծահասակների արձակուրդը շատ է նպաստում ինքնակայունացմանը: Պետք է լուծել նոր խնդիրներ և ինքնուրույն որոշումներ կայացնել:	**0**
A	Վերջապես դուրս, վերջապես ազատ – աշխարհը սպասում է քեզ: Թե Չիլիում հանգստացողների կխնամես, թե Նորվեգիայում բանջարեղենի այգի կմշակես, թե Անգլիայի ամառային ճամբարներից մեկում երեխաների համար հոգ կտանես և միևնույն ժամանակ մեկ տարի շարունակ օտար երկրներով կճանապարհորդես – ընտրությունը քոնն է: «Աշխատանք և ճանապարհորդություն» աշխարհով մեկ, նշանակում է աշխատել փոքր աշխատավարձի, կամ էլ սննդի և օթևանի դիմաց, իսկ մնացած օրերին՝ ճանապարհորդել: Այսպիսով դու ոչ միայն մի քանի արկածներ կապրես, այլ նաև ինտենսիվ կծանոթանաս երկրին և մարդկանց: Ի՞նչ անել: Դե՛ իհարկե անցնել գործի, տեսնել աշխարհը և քո ցանկության երկիրը դարձնել քո երկրորդ հայրենիքը:	
B	Այս մասին դու միշտ երազել ես. Երկու շաբաթ անցկացնել տարբեր երկրներից եկած երիտասարդների հետ: Այդ ընթացքում դու կարող ես տեղեկանալ նրանց մշակույթի, մտածելակերպի և ապրելակերպի մասին: Միջազգային երեկոների ժամանակ դու կծանոթանաս տարբեր երկրներին բնորոշ ճաշատեսակներին, երաժշտությանը և պարերին: Միաժամանակ հնարավորություն կունենաս բացահայտել և ըմբռնել մշակութային տարբերությունները և ընդհանրությունները: Բավականաչափ ժամանակ է մնում նաև նոր ընկերներ ձեռք բերելու համար:	
C	Կցանկանայի՞ր ավելի երկար ժամանակ անցկացնել արտասահմանում և ոչ միայն ճանապարհորդել այլ նաև երկիրը և մարդկանց մոտիկից ճանաչել: Որպես կամավոր ավելի խորը կներթափանցես օտար մշակույթի մեջ, քան դա հնարավոր կլիներ սովորական արձակուրդի ժամանակ: Դու կամավոր կաշխատես բնիկների հետ կողք կողքի և միևնույն ժամանակ ավելի լավ կծանոթանաս այդ երկրի կենսապայմաններին: Այդ ժամանակ դու կկատարես հասարակական աշխատանք, ինչպես օրինակ օժանդակություն որևէ մի դպրոցում կամ երեխաներին օգնող նախագծում: Ինչպես նաև կարող ես աշխատել «Վայրի Կյանք» նախագծում և դրանով իսկ օժանդակել բնության և կենդանիների պաշտպանությանը: Քո հնարավորությունները բազմազան են:	
D	Սիրով կգնայի՞ր արտասահման, կվերապրեի՞ր նոր արկածներ, կցանկանայի՞ր բարելավել լեզվական գիտելիքներդ և ծանոթանալ երկրին և ժողովրդին: Բայց ցավոք դպրոցում սովորելու, ուսանելու կամ աշխատելու պատճառով դու չունե՞ս բավականաչափ ազատ ժամանակ արտասահմանում ավելի երկար մնալու համար: Միևնույն է անգլերեն, ֆրանսերեն, թե իսպաներեն, ինտենսիվ կուրսը արտասահմանում քեզ խոստանում է ոչ միայն հաջողություն ուսման մեջ, այլ նաև անմոռանալի ճանապարհորդություն և հոյակապ փորձառություն:	
E	Փորձիր նոր սպորտաձևեր և վստահիր ուժերիդ: Ընկերներիդ հետ լեռնային հեծանիվ քշիր բլրոտ տեղանքներում, սերֆինգի տախտակով սահիր ալիքների վրա, մակույկով անցիր անծանոթ ջրային տարածքներով կամ զգա իսկական թիմային ոգին ֆուտբոլային կամ վոլեյբոլային խաղի ժամանակ: Դրանից հետո կարող ես հանգստանալ ծովափին, որը գտնվում է քո բնակավայրից ոչ հեռու: Իսկական երջանկության զգացողություն: Արկածներ ունենալ, լինել ստեղծագործող, հանդիպել քո տարիքի մարդկանց, միասին ծիծաղել, կամ պարզապես միայն հանգստանալ – արա՛ այն, ինչը քեզ հաճույք է պատճառում:	

____ / 10 P.

Name: _____

Aufgabe II Leseverstehen

II. Mit dem kostenlosen Interrail-Ticket durch Europa

Կարդա տեքստը և (1-6) ցուցումներում նշիր ճիշտ տարբերակը (a, b կամ c)

Վանեսան 18 տարեկան է, ծնվել է 1999 թվականին Սաքսոնյա–Անհալթում գտնվող գյուղերից մեկում: Մինչ օրս նա արձակուրդները անց է կացրել միայն Բալթիկ ծովի ափին, Լեհաստանում և Չեխիայում և դպրոցական ուղևորություն է կատարել դեպի Լոնդոն: Հիմա նա գտնվում է Սլովենիայի և Խորվաթիայի սահմանին: Այնտեղից նա ուզում է Հունգարիա ճանապարհորդել:
Ճամփորդության հնարավորությունը նրան ընձեռնել է Եվրոպական Հանձնաժողովը:
«Բացահայտիր Եվրոմիությունը» այսպես է կոչվում այն ծրագիրը, որի շրջանակներում Եվրոմիության 15.000 18 ամյա երիտասարդներ ստացել են անվճար երկաթուղային տոմս ամբողջ Եվրոպայի համար:
Ճանապարհորդությունը կարող է տևել մինչև 30 օր, կացարանի և ապրուստի համար պետք է հոգան հենց իրենք երիտասարդները: Մասնակիցները պետք է ծանոթանան Եվրոպային մոտիկից, հեռավոր երկրներից ընկերներ գտնեն և ունեցած նախակարծիքները փոխեն:
Երկու օր անց երեկոյան ժամը տասնմեկին Վանեսան նստած է Սպլիտի ծովափնյա զբոսավայրում, նրա երկար շագանակագույն մազերի տակից երևում են երկու մեծ ականջօղեր, հագին ունի վերնաշապիկ, անձրևային բաճկոն: Մի քիչ առաջ տեղաց ուժեղ անձրևի տարափ, ինչը տարվա այս եղանակի համար անսովոր էր : «Լավ է գոնե դրա շնորհիվ քիչ եռուզեռ կա քան սովորաբար, վաղը այստեղ կլինի նորից սարսափ», ասում է Վանեսան: Սարսափը՝ դա մեծ թվով տուրիստներն են, որոնք իրենց սելֆիի ձողերով ամբողջ օրը շրջում են հին քաղաքով: Այժմ նրանցից մի քանիսը նստած են զբոսավայրի բարերում, շատերը Վանեսայի տարիքին են :
Գիշերային գնացքով Վանեսան կմեկնի Զագրեբ, այնտեղից էլ Հունգարիա:
Ըստ Վանեսայի գնացքով մեկնելը ճանապարհորդության ամենալավ պահն է: Քնել մի քաղաքում, արթնանալ ծովափին, իսկ այսօր հակառակը: Ճանապարհին լանդշաֆտներ, զրույցներ տարբեր մարդկանց հետ, ընդհանուր առօրյա գնացքում, ասես մեկնող համայնք լինի:
Կեսօրից հետո վերջապես նա ժամանում է Կեսթեյ՝ Արևմտյան Հունգարիայի Բալատոն լճի ափին գտնվող 21.000 բնակչություն ունեցող մի փոքրիկ քաղաք: Անձրև է գալիս:
Կեսթեյը Սպլիթի ճիշտ հակապատկերն է. Փողոցում չկա կենդանություն, փակ են բոլոր խանութները: «Գրեթե այնպես է, ինչպես տանը»,-ասում է Վանեսան: Իր ծննդավայր Բենենդորֆը ավելի փոքր է, ունի 2000 բնակչություն, գտնվում է Այսլեբենից տասը կիլոմետր հեռավորության վրա: Ըստ Վանեսայի, թեև այն փոքր է և ոչ այնքան գեղեցիկ, բայց այնուամենայնիվ նա միշտ հաճույքով է վերադառնում այնտեղ:

Name: _____

Չորս օր անց Բուդապեշտում Վանեսան հանդիպում է միջազգային երկաթգծով ճանապարհորդող մեկ այլ խմբի հետ: Մի երիտասարդ նիդերլանդացու հետ նա զբոսնում է քաղաքով, երկար զրուցում Եվրոպայի, տարբեր երկրների մարդկանց տարբերությունների ու նմանությունների մասին և այն մասին, որ ճանապարհորդությունները կվերացնեն նախակարծիքները և կմիավորեն մարդկանց: Իսկ մի քյոլնեցի նրան զրույցի սկզբում տալիս է ամենատարածված հարցը. «Որտեղի՞ց ես դու ծագումով»: Վանեսան ասում է. «Սաքսոնյա-Անհալթից»: «Ախ, դա Սաքսոնիայում գտնվող մի քաղաք է, չէ՞», Վանեսան չգիտի, արդյոք ծիծաղի, թե լաց լինի:
Արդյոք իր ճանապարհորդությունից երեք ամիս անց նա ու՞նի այն զգացողությունը, որ Եվրոպայի երիտասարդությունը այս ծրագրի շնորհիվ ավելի է համախմբվում: «Խնդիրը ամենևին էլ երիտասարդների մեջ չէ»,-գտնում է Վանեսան: նա գրեթե չի ճանաչում իր տարիքի որևէ մեկի, ով հաճույքով չճանապարհորդեր այլ երկրներ: Երիտասարդներին նա բնորոշում է որպես համախոհ, իսկ նախապաշարմունքները ի հայտ են գալիս ավելի ուշ: «Տարիքի հետ մարդիկ հանկարծակի սկսում են տարօրինակ կարծիքներ հայտնել»: Վանեսան կարծում է, որ ավելի լավ կլիներ տարեց մարդկանց ուղարկել ճանապարհորդության :

Quelle: https://www.jetzt.de/politik/junge-menschen-auf-interrail-trip (letzter Zugriff: 18.01.2019)

1. Վանեսա…

a	երկաթուղու ուղեկցորդուհի է:	☐
b	արդեն շատ մայրցամաքներում է եղել:	☐
c	առաջին անգամ է ճանապարհորդում ամբողջ Եվրոպայով:	☐

2. «Բացահայտել Եվրոպան » ծրագիրը…

a	հնարավորություն է տալիս ավելի քան 30 օր ճանապարհորդելու	☐
b	ցանկանում է երիտասարդներին Եվրոպայում ավելի համախմբել:	☐
c	թույլ է տալիս ճանապարհորդել տարբեր տրանսպորտային միջոցներով:	☐

3. Վանեսան քննադատում է…

a	վատ եղանակը:	☐
b	զբոսաշրջիկների մեծ քանակությունը:	☐
c	զբոսավայրի բարերը:	☐

Name: _____

4. Իր շրջագայության ժամանակ Վանեսային հատկապես դուր է գալիս

a	երկաթուղիով տարբեր վայրեր մեկնելը:	☐
b	օտար քաղաքների կյանքին ծանոթանալը:	☐
c	ուրիշների հետ իր հայրենիքի մասին զրուցելը:	☐

5. Հունգարիայում գտնվող Կեսթեյ քաղաքը Վանեսայի համար ...

a	այնպիսին է, ինչպիսին այն քաղաքը, որտեղ նա մեծացել է:	☐
b	Արևելյան Եվրոպային բնորոշող մեծ քաղաքներից է:	☐
c	այնպիսին է, ինչպիսին այն քաղաքը, որտեղ նա ամեն տարի իր արձակուրդն է անցկացրել:	☐

6. Բուդապեշտում եղած ժամանակ Վանեսան զրուցում է

a	տարբեր երկրների մշակութային բազմազանության մասին:	☐
b	տարբեր երկրների մշակութային առաջարկների մասին:	☐
c	տարբեր քաղաքների տուրիստական յուրահատուկ առաջարկների մասին:	☐

____ / 12 P.

Name: _____

Aufgabe III Sprachmittlung

III. Berlin erfahren – geführte Radtour

Այս առաջադրանքը պահանջում է տեքստում եղած կարևոր ինֆորմացիան ամբողջական նախադասություններով վերարտադրել մայրենի լեզվով, այլ ոչ թե բառացի թարգմանել: Երբեմն կան միտքն արտահայտելու մի քանի հնարավորություններ: Ընտրի՛ր մեկը:

- Քո հայրենիքից մի ընկեր կամ ընկերուհի ցանկանում է արձակուրդներին մեկնել Գերմանիա: Դու ցանկանում ես նրան նվիրել Բեռլինով մի հեծանվային շրջագայություն: Ընկերոջդ կամ ընկերուհուդ շատ է դուր գալիս այդ միտքը: Ինտերնետում դու մի կայք ես գտել, որն այդ առաջարկն է անում: Փոխանցիր այդ ինֆորմացիան ընկերոջդ կամ ընկերուհուդ քո մայրենի լեզվով՝ կազմելով ամբողջական նախադասություններ:

Mit dem Fahrrad durch Berlin

Der beste Weg eine neue Stadt zu entdecken ist das Fahrrad, für Berlin gilt das ganz besonders. Die Stadt ist flach, grün und weitläufig und der Verkehr ist auf Radfahrer eingestellt.

Bei einer geführten Tour lernen Sie Berlin sicher und entspannt in kleinen Gruppen kennen. Unsere gut ausgebildeten Tourguides zeigen Ihnen die schönsten, spannendsten und leckersten Ecken der deutschen Hauptstadt. Mit viel Hintergrundwissen und auch etwas Humor erzählen wir Ihnen von den besonderen Höhepunkten unserer Heimatstadt. Als Radfahrer sind Sie ganz nah dran an Berlins berühmten Sehenswürdigkeiten.

Das Tempo ist dabei entspannt und auch für untrainierte Radfahrer leicht zu bewältigen. Und damit Sie beim Fahren noch schauen können, führen wir Sie über gut ausgebaute Radwege oder durch ruhige Nebenstraßen.

Von der klassischen Sightseeing-Runde entlang der wichtigsten Sehenswürdigkeiten oder der Berliner Mauer, über Touren ins alternative Kreuzberg bis hin zu Spezialtouren zu Themen wie Berlins Street Art oder in den wilden Osten. Entdecken Sie vom Rad aus mit uns gemeinsam eine der aufregendsten Städte der Welt!

Name: _____

Während der Saison von Mitte März bis Anfang November finden täglich Touren statt. Unser Depot, Fahrradverleih und Büro sind Montag bis Sonntag von **8:00 bis 20:00 Uhr** für Sie geöffnet**.**

Unser Fahrradparkhaus besteht aus mehreren hundert gut gewarteten und verkehrssicheren Bikes verschiedenster Typen. Wir haben garantiert das richtige Rad für Sie und genug Platz um eine Proberunde auf dem Hof zu drehen. Auch wenn jemand z.B. aus gesundheitlichen Gründen nicht Rad fahren kann, muss niemand zurückbleiben. Für solche Fälle arbeiten wir mit einer Reihe von Fahrrad-Taxis zusammen, die auf Anfrage gebucht werden können.

Service rund ums Fahrrad und Tour

Neben gut gewarteten Rädern bekommen Sie bei uns auch diverses Zubehör, um Ihre Reise so angenehm wie möglich zu machen. Helme, Ponchos, Hosenklammern, Sonnencreme und Handschuhe gibt es bei uns jederzeit kostenfrei. Tipps zu kulturellen Veranstaltungen, Unterkünften, den besten Hotels und Ausflügen bekommen Sie nicht nur bei uns vor Ort, sondern auch regelmäßig bei uns im Blog. Hier und auf unserer Webseite informieren wir Sie auch regelmäßig über die besten Veranstaltungen.

Quelle: Nach https://berlinonbike.de/ (letzter Zugriff: 13.01.2019)

1. Բացատրիր, թէ ինչու՞ է հեծանիվը ամենահարմար փոխադրամիջոցը Բեռլինում շրջագայություն կատարելու համար: Նշի՛ր երկու օրինակ:

_____

_____

____/ 2 P.

2. Նշի՛ր գիդով հեծանվային շրջագայության երկու առավելություն:

_____

_____

____/ 2 P.

3. Բացատրի՛ր, թե ինչ ճանապարհներով են անցնելու: Նշի՛ր երկու օրինակ:

_____

_____

____/ 2 P.

4. Ե՞րբ են սեզոնին տեղի ունենում շրջագայությունները:

_____

____/ 1 P.

Name: _____

5. Նկարագրիր վարձով տրվող հեծանիվների տեխնիկական վիճակը:

_____

____/ 1 P.

6. Բացատրի՛ր, թե ի՞նչ կարող են անել հաճախորդները իրենց հարմար հեծանիվ գտնելու համար:

_____

____/ 1 P.

7. Նշի՛ր վարձատուի կողմից առաջարկվող այլընտրանք այն հաճախորդների համար, որոնք անձամբ ի վիճակի չեն հեծանիվ քշելու:

_____

____/ 1 P.

8. Նշի՛ր երեք բան, որ վարձակալության ժամանակ կարելի է անվճար ստանալ:

_____

_____

_____

____/ 3 P.

9. Ո՞ր ինֆորմացիայի շուրջ է կազմակերպիչը տալիս ցուցումներ համացանցում : Նշի՛ր երեք օրինակ:

_____

_____

_____

____/ 3 P.

____ / 16 P.

Name: _____

Aufgabe IV Textproduktion

IV. Sommerakademie

Ամեն տարի երիտասարդները հնարավորություն են ստանում հաճախել ամառային ուսումնական կենտրոն: Այնտեղ նրանք կարող են լավացնել իրենց լեզվական գիտելիքները և նախապատրաստվել գալիք կյանքին: Երեք շաբաթվա ընթացքում երիտասարդները կարող են զարգացնել իրենց ստեղծագործական միտքը և անհատական ունակությունները:

Լեզվի կուրսերի հետ մեկտեղ մասնակիցների համար կազմակերպված է բազմաբովանդակ մի ծրագիր, որի մեջ ներառված են նաև աշխատանքի դիմելածևի դասընթացներ և տարբեր սպորտային ծրագրեր: Ամառային ուսումնական կենտրոնի դասընթացների ավարտին երիտասարդները ստանում են վկայական, որով գնահատվում են իրենց անհատական հաջողություններն ու մասնակցությունը, և այն կարող է առավելություն տալ նրանց աշխատանքի դիմելու պրոցեսում:

Դու հաճախել ես ամառային ուսումնական կենտրոն և մի ինտերնետային բլոգում հաղորդում ես այդ փորձի մասին: ներառի՛ր հետևյալ կետերը.

- Բացատրի՛ր, թե ինչու ես հաճախել ամառային ուսումնական կենտրոն:
- Նկարագրի՛ր ուսումնական կենտրոնի երեք շաբաթյա ծրագիրը:
- Բացատրի՛ր, թե ինչու՞ որոշ փորձառություններ քեզ հատկապես դուր եկան:
- Նկարագրի՛ր որոշ խնդիրներ, որոնք ի հայտ եկան:
- Շարադրի՛ր քո եզրափակիչ կարծիքը ամառային ուսումնական կենտրոնի մասին:

Գրիր 200- ից 250 բառ:

Բլոգ նախատեսված գերմաներեն լեզվի դասընթացի համար
Գրված կողմից
Ամիս, ամսաթիվ /03.05.2019/, 10:30_____

_____

_____

_____

_____

Name: _____

Name: _____

Name: _____

Հանձնելուց առաջ հաշվիր բառերը: Անունները և գերմաներեն լեզվով բառերը պետք չէ հաշվել: